Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի Անանիա Շիրակացու անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մայրենիի (7,5 դասաժամ), ֆիզիկայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստա-տությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առան-ձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք
ներկայացնել՝

դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4
չափի,
բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
անձը հաստատող փաստաթուղթ,
«Հանրակրթության մասին» ՀՀ օրեն-քի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերա-բերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

ինքնակենսագրություն (Ձեւ 5),
այլ պետությունների քաղաքացինե-րը՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 7-ից մինչեւ սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա *սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14:00-ին,* ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի Անանիա Շիրակացու անվան հ.6 հիմնական դպրոցում: